

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

JOURNAL
OF
ARABIC STUDIES

№ 10

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
YEREVAN YSU PRESS

2018

*Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by the decision of the scientific council of
the Oriental Studies Department, Yerevan State University*

Խմբագրական խորհուրդ

Editorial Board

Դավիթ Հովհաննիսյան – բ.գ.թ.,
պրոֆեսոր (նախագահ)
Մարգարիտա Խաչիկյան
բ.գ.դ., պրոֆեսոր
Ռուբեն Կարապետյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Արշակ Փոլադյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Գուրամ Չիկովանի
բ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)
Սամվել Կարաբեկյան
բ.գ.թ., դոցենտ
Մուշեղ Ասատրյան
PhD (Կանադա)
Սոնա Տոնիկյան
բ.գ.թ., դոցենտ
Մարատ Յավրումյան
բ.գ.թ., դոցենտ
Հայկ Քոչարյան
պ.գ.թ., դոցենտ
Արայիկ Հարությունյան
պ.գ.թ.

Prof. David Hovhannisyan
(editor in chief)
Prof. Margarita Khachkyan
Prof. Ruben Karapetyan
Prof. Arshak Poladyan
Prof. Guram Chikovani
(Georgia)
Dr. Samvel Karabekyan
Mushegh Asatryan, PhD
(Canada)
Dr. Sona Tonikyan
Dr. Marat Yavrumyan
Dr. Hayk Kocharyan
Dr. Arayik Harutyunyan

© Երևանի պետական համալսարան, 2018

© Yerevan State University, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վարդան Ղափլանյան

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆ ԱԲԽԱԶԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1992
-1993 ԹԹ. ՎՐԱՅ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....9-22

Գայանե Մկրտումյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԵՎԱՃՈՒՄԸ ՕՄՍԱՐ ԻԲՆ ԱԼ-ԽԱՏՏԱԲ (634-644)
ԽԱԼԻՖԱՅԻ ՕՐՈՔ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՎ ՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....23-32

Արամայիս Գրիգորյան, Վարդան Ղափլանյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՈՒԹՅԱՆ» ԴՈԿՏՐԻՆԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....33-46

Արշակ Գևորգյան

1950-1960 ԹԹ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽՈՂ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՔԹԱՇԻ ՍՈՒՖԻԱԿԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....47-60

Աբու Ջափղ Ալի Մուսա

«ՊԱՂԵՍԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ»
(«ՖԱԹՀ») ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....61-75

Լուսինե Մկրտչյան

ԻՍՐԱՅԵԼԻ «ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ.....76-85

Գազիկ Համբարյան

ԿԱՏԱՐՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԱՀԵՐԸ..... 86-95

Դավիթ Հովհաննիսյան, Արու Զաիր Այի Մուսա

ԻՍՐԱՅԵԼԱԲՆԱԿ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԱՐԱԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ

ՊԱՌԱԿՏՄԱՆ ԵՎ ԴԻՍ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 96-113

Վահե Աղասարյան

ԹՈՒՐԹԻՍՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ..... 114-120

ԻՍԼԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աննա Գևորգյան

ՄԵԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՏԱՐԲԵՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ.

ԱԼԻ ԽԱՄԵՆԵԻԻ ԵՎ ՀԱՍԱՆ ՌՈՒՀԱՆԻԻ ՈՐՈՇ

ՏԱՐԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 121-134

Շուշան Կյուրեղյան

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԻԲՆ ԱԼ-ՋԱՌԻԶԻ

«ԹԱԼԲԻՍ ԻԲԼԻՍ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ..... 135-162

Տաթևիկ Մկրտչյան

ՆԱԿՆՆԱԼ-ԲԱԼՆԱԳ-Ի ՈՒՂԵՐՁ-ՆԱՄԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ..... 163-176

Լևոն Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՉԿԻԹՆԵՐԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)..... 177-200

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Հովհաննիսյան

«ԱՐԱԲԸ» ՈՐՊԵՍ ԻՆՖՈՐՄԱՅԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ

ԱՂԱՊՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ..... 201-213

Լուսինե Տեր-Հովհաննիսյան

ԲԱՆՏԱՅԻՆ ԵՐԿԻ ԺԱՆՐՆ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. «ՀԱԲՄԻԵ».....214-222

Ամայյա Գրիգորյան

ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....223-234

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Երիցյան

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՃԳՆԱԺԱՍԸ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....235-255

Զարուհի Խաչատրյան

ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ՁԻԱՆՈՒՆՆԵՐ ԸՍՏ

ՊԱՐՄԿԵՐԵՆ «DO FARASNĀME. MANSUR O MANZUM»

ՁԻԱՄԱՏՅԱՆԻ.....256-270

Մերվաթ Գոմասա Արդուլլահ Օսման

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....271-283

CONTENT

HISTORY

Vardan Ghaplanyan

THE FORMATION AND ACTIVITY OF THE MUSLIM ABKHAZIAN
COMMUNITY OF TURKEY DURING 1992-1993 GEORGIAN-
ABKHAZIAN WAR.....9-22

G.ayane Mkrtumyan

THE CONQUEST OF EGYPT DURING THE REIGN OF KHALIFA
OMAR IBN AL-KHATTAB IN CHRISTIAN AND MUSLIM
HISTORIOGRAPHY (634-644).....23-32

Aramayis Grigoryan, Vardan Ghaplanyan

THE IMPLEMENTATION OF TURKEY'S "STRATEGIC DEPTH"
DOCTRINE IN THE CONTEXT OF CONFLICT RESOLUTION
IN THE MIDDLE EAST AND SOUTH CAUCASUS.....33-46

Arshak Gevorgyan

REFLECTIONS AROUND THE INTERRELATIONS BETWEEN
THE TURKEY'S RULING (1950-1960) DEMOCRATIC PARTY
AND THE BEKTASHI SUFI ORDER.....47-60

Abu Zayd Ali Musa

THE FORMATION AND DEVELOPMENT OF "PALESTINIAN
NATIONAL LIBERAL MOVEMENT" (FATAH).....61-75

Lusine Mkrtchyan

LEGAL ASPECTS OF THE LAW OF RETURN.....76-85

Gagik Hambaryan

QATAR CRISIS AND MIDDLE EAST
INTERESTS OF THE USA.....86-95

Davit Hovhannisyan, Abu Zayd Ali Musa

ISRAELI PALESTINIAN ARAB POLITICAL LEADERS'
POSITION ON PALESTINIAN SPLIT AND IT'S REASONS.....96-113

Vahe Aghasaryan

THE POLITICS OF TURKEY IN SYRIA AND
THE KURDISH FACTOR.....114-120

ISLAMIC STUDIES

Anna Gevorgyan

ONE REVOLUTION, DIFFERENT REVOLUTIONARIES: SOME
TENSIONS BETWEEN THE PRESIDENT
ROUHANI AND AYATOLLAH KHAMENEI.....121-134

Shoushan Kyureghyan

THE INNOVATION AND THE INNOVATORS ACCORDING
TO 'IBN AL-JAWZĪ'S "TALBĪS IBLĪS".....135-162

Tatevik Mkrtchyan

DISCUSSION OF SOME STRUCTURAL AND CONTEXTUAL
PECULIARITIES OF 'ALI IBN ABĪ TĀLIB'S LETTERS
IN NAHĠ AL-BALĀĠA.....163-176

Levon Petrosyan

THE MOSQUES OF YEREVAN (HISTORICAL APPROACH).....177-200

LITIRATURE

Davit Hovhannisyan

"ADAB" AS THE ADAPTATION INSTRUMENT FOR
THE INFORMATION FLOW.....201-213

Lusine Ter-Hovhannisyan

THE "HABSIYAT" GENRE IN
PERSIAN LITERATURE.....214-222

Amalya Grigoryan

THE HEBREW TEXT AND THE ARMENIAN

TRANSLATIONS OF THE SONG OF SONGS223-234

LINGUISTICS

Hasmik Yeritsyan

CRISIS OF ARABIC LANGUAGE IN

THE UNITED ARAB EMIRATES235-255

Zaruhi Khachatryan

SOME ARABIC ORIGIN HORSE APPELLATIONS

ACCORDING TO PERSIAN LANGUAGE HORSE BOOK

«DO FARASNĀME. MANSUR O MANZUM»256-270

Mervat Gomaa Abdullah Osman

THE GREEK LOANWORDS MUTUAL IN

ARABIC AND ARMENIAN271-283

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՃԳՆԱԺԱՍՆ
ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հասմիկ Երիցյան
hasmikyericyan@gmail.com

Բանալի բառեր՝ Արաբերեն, արաբերենի ճգնաժամ, լեզվաբանություն, հանրալեզվաբանություն, երկրաբառություն, երկլեզվություն, լեզվական ազդեցություն, արաբական բարբառներ, անգլերենի դերը, գլոբալիզացիա, գլոբալ լեզու:

Արաբերենը, լինելով ՄԱԿ-ի վեց պաշտոնական լեզուներից մեկը, իր գոյության ամբողջ ընթացքում կրել է մի շարք լեզուների ազդեցությունը, ինչպես օրինակ, պարսկերենի, թուրքերենի, ուրդուի, իսպաներենի, անգլերենի ազդեցությունը: Այսօր արաբերենը շարունակում է իր գոյությունը՝ կրելով երկու տեսակի ճնշումներ, մի կողմից գլոբալիզացիայի արագ տեմպերն են և օտար լեզուների ազդեցությունը, իսկ մյուս կողմից՝ արաբերենի տարածքային բազմաթիվ խոսվածքներն ու բարբառները: Լեզվական այս երկճեղքված իրադրությունն առկա է արաբական աշխարհի ցանկացած կետում՝ յուրաքանչյուրն ունենալով իր առանձնահատկությունները:

Արաբական աշխարհում հանրալեզվաբանական առանձնահատուկ իրադրություն է տիրում Ծոցի երկրներում: Դարեր շարունակ Պարսից Ծոցը, որն իրենք արաբները կոչում են Արաբական Ծոց, եղել է առևտրական կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջան՝ շնորհիվ Արևելքի և Արևմուտքի միջև առևտրային կարևոր ճանապարհների վրա իր աշխարհագրական յուրահատուկ դիրքի: Այս տարածաշրջանը կարևոր տնտեսական նշանակություն է ունեցել աշխարհի տարբեր ազգերի

առևտրականների համար¹: Տարածաշրջանի այս առևտրական ֆոնի վրա էլ անխուսափելի է եղել լեզվական ազդեցություններն ու փոխառությունները պարսկերենից, թուրքերենից, պորտուգալերենից և անգլերենից: Ծոցի երկրներից արաբերենի ճգնաժամը առավել խորն է արտահայտված հատկապես Արաբական Միացյալ Էմիրություններում, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց մասին անդրադարձ կկատարվի սույն հոդվածում:

Արաբական աշխարհում ԱՄԷ-ի հանրալեզվաբանական իրադրությունն ունի իր ուրույն նկարագիրը և առանձնահատկությունները՝ կապված տարածաշրջանի պատմության, աշխարհագրական դիրքի և վերջին տարիների տնտեսական զարգացման հետ: Այստեղ նկատվում է մի կողմից տեղական բարբառների դերի բարձրացում և այդ բարբառների՝ հիմնական լեզվից շեղումներ, իսկ մյուս կողմից անգլերենի դերի գերազանահատում կյանքի գրեթե բոլոր բնագավառներում:

ԱՄԷ-ի հասարակությունը ակնատես է լինում ինտելեկտուալ և մշակութային մարտահրավերների, որը հետևանքն է այն փոփոխությունների, որոնք հաջորդել են նավթի հայտնաբերմանը և գլոբալիզացիայի արագ տեմպերին: Այդ ամենն արտացոլվել է հասարակության կենսական հարաբերությունների վրա, հատկապես լեզվի վրա, որը հասարակական կյանքի ամենակարևոր բնագավառն է և ամենաշատն է ենթարկվում սոցիալական փոփոխությունների ազդեցությանը:

Հանրահայտ լեզվաբան Ֆիշմանը իր «Ի՞նչ էք դուք կորցնում, երբ կորցնում եք Ձեր լեզուն» աշխատության մեջ լեզվի ճգնաժամը նկարագրել է հետևյալ կերպ՝ «Լեզուները, առհասարակ, ճգնաժամ են ապրում և աստիճանաբար անհետանում են, երբ տվյալ

1دراسات في لهجات شرقي الجزيرة العربية" الدكتور أحمد محمد الضبيبي، بيروت 1983

հասարակությունը ընտրում է մեկ այլ գերիշխող լեզու՝ իր մայրենի լեզվի փոխարեն: Այս երևույթը սովորաբար տեղի է ունենում երկլեզու հասարակություններում, որտեղ մայրենի լեզվին զուգահեռ միաժամանակ օգտագործվում է մեկ այլ լեզու, որը մրցակցում է մայրենի լեզվի հետ: Այն դեպքում, երբ երկրորդ լեզուն ավելի մեծ կիրառություն է ստանում և վայելում է տվյալ հասարակության նախապատվությունը, ապա նվազեցվում է մայրենի լեզվի դերը, ինչն էլ աստիճանաբար հանգեցնում է լեզվի անկմանը»²:

Հատկանշական է, որ ժամանակակից աշխարհում լեզուների անհետացումը և անկումը ավելի արագ է ընթանում, քան մարդկության պատմության ցանկացած այլ ժամանակահատվածում: Երբ մարդիկ կորցնում են իրենց լեզուն, դրա հետ միասին կորցնում են նաև իրենց մշակույթը, ինչը մեծ կորուստ է համարվում³:

Այսօր ԱՄԷ-ում լուրջ սպառնալիք է ստեղծվել արաբերեն լեզվի և արաբական մշակույթի համար, քանի որ լեզուն և լեզվամտածողությունը անկասկած իր ազդեցությունն են թողնում նաև մշակույթի վրա: Այն սերունդը, որը խոսում և մտածում է ոչ արաբերենով, այլ անգլերենով, չի կարող պահպանել իր նախնիների ավանդական մշակույթը, նույնիսկ ավանդույթները: Անգլերենի պարագայում հատկապես, դժվար է պահպանողական ավանդույթներին հետևելը, քանի որ այս լեզուն իր հետ բերում է որոշակի այլ արժեհամակարգ:

Տեխնիկայի և զբոսաշրջության զարգացման, առօրեկան կյանքի պայմաններում, որում ապրում է ԱՄԷ-ի բնակչությունը, բարդ է դարձել լեզվի պահպանման և զարգացման խնդիրներ լուծելը: Նոր դժվարություններ են առաջացել հատկապես

² Fishman, J. (1996). "What do you lose when you lose your language?"

³Նույն տեղում

լեզվական և մշակութային կախվածության մեջ ընկնելու վախի պատճառով: Մի շարք հեղինակներ և հասարակական գործիչներ բազմիցս փորձել են ահազանգել, գրքեր են գրվել լեզվի ճգնաժամի մասին, մասնավորապես գրող Ահմադ Մուհամեդ Ալ Մաթուկը իր «Ժամանակակից արաբերենը Արաբական Ծոցի երկրներում ... և ինքնության խնդիրը» գրքում անդրադառնում է արաբերենի ճգնաժամին, նրա գոյության վիճակին՝ զուգահեռներ անցկացնելով լեզվի և ինքնության միջև⁴: Ուղիներ է մատնանշում փրկելու արաբերենի կարգավիճակը և տեղը հասարակության մեջ:

ԱՄԷ-ն առանձնանում է իր բազմամշակութային և բազմալեզու հասարակությամբ: Ինչպես արաբական յուրաքանչյուր երկրին, ԱՄԷ-ին նույնպես բնորոշ է երկբարբառությունը (Diglossia): Ֆերգուսոնը երկբարբառությունը բնորոշում է որպես միևնույն լեզվի երկու և ավելի տարբերակների կիրառում, որոնցից յուրաքանչյուրն ունի տարբեր գործառույթներ⁵: Այստեղ պաշտոնական լեզուն արաբերենն է՝ Ժամանակակից ստանդարտ արաբերենը (այսուհետ՝ ԺՄԱ), որը չունի առօրյա կիրառություն, այն օգտագործվում է միայն ակադեմիական ոլորտում՝ գրելու և կարդալու համար, պաշտոնական գրույցներում, կրոնի ոլորտում: Այն համարվում է «բարձր լեզու» և մեծ նշանակություն ունի բոլոր արաբների համար, քանի որ այն իրենց Մուրբ գրքի՝ Ղուրանի լեզուն է, սակայն արաբների համար ԺՄԱ-ն չի համարվում իրենց մայրենի լեզուն, յուրաքանչյուր երկրի բանավոր խոսակցական լեզուն է համարվում մայրենի լեզու:

ԱՄԷ -ի հասարակության, մշակույթի և տեղի գործնական լեզուն Ծոցի արաբերենն է, որը համարվում է «ցածր լեզու»,

⁴اللغة العربية المعاصرة في الخليج العربي وقضية الهوية "طه أحمد محمد المعتوق. 12 نيسان 2014"

⁵Ferguson, C. A. (1971). "Language structure and language use"

այստեղ տարածված են նաև արաբական գրեթե բոլոր բարբառները, քանի որ բացի տեղացիներից, որոնք խոսում են Ծոցի բարբառով, ԱՄԷ-ում բնակվում, աշխատում կամ ուսանում են արաբներ գրեթե բոլոր արաբական երկրներից և նրանցից յուրաքանչյուրը հաղորդակցվում է իր մայրենի բարբառով, սակայն արաբական բազմաթիվ բարբառների օգտագործումը միայն բանավոր մակարդակում է կատարվում, քանի որ գրագրությունը կատարվում է ԺՄԱ-ով կամ անգլերենով: Եթե արաբական մյուս երկրներում երկբարբառությունը արտահայտվում է միայն ԺՄԱ-ի և տվյալ երկրի բարբառի համակեցությամբ, ապա ԱՄԷ-ում երբարբառությունը դրսևորվում է ԺՄԱ-ի և տասնյակ արաբական բարբառների համակեցությամբ: Հատկանշական է, որ արաբախոսների մեծ մասի համար արաբական երկբարբառությունը վերածվում է երկլեզվության, քանի որ երբեմն հասարակությունը դրանք ընկալում է որպես տարբեր լեզուներ:

Մյուս կողմից, ԱՄԷ հասարակության կյանքում լեզվական հակամարտություն կա, օտարերկրյա բազմաթիվ կազմակերպությունների գոյությունը, տնտեսական և սոցիալական տեղաշարժերը, պետական համակարգի փոփոխությունը, զբոսաշրջության զարգացումը իրենց բացասական ազդեցությունն են թողնում արաբերենի վրա, այդ ազդեցությունը մասնավորապես արտացոլվում է նոր սերնդի լեզվի վրա: Ինչպես յուրաքանչյուր այլ հասարակությունում, այստեղ նույնպես հասարակական և տնտեսական ցանկացած փոփոխություն առաջին հերթին ազդում է երիտասարդ սերնդի վրա, որը բաց է ընդունելու ցանկացած փոփոխություն՝ լինի դա դրական, թե բացասական, այս առումով ավագ սերունդն ավելի պահպանողական է:

Ընդհանուր առմամբ ԱՄԷ-ում արաբերենը հակազդվում է երկու հիմնական գործոններից, մի կողմից անգլերենի գերիշխող

դիրքն է, իսկ մյուս կողմից՝ տեղական բազմաթիվ բարբառներ, որոնք իշխում են գրական արաբերենի վրա:

ԱՄԷ-ում արդիական է դառնում նաև ինքնության խնդիրը: Ընդ որում ինչքան զարգացած է պետությունը, ազգային ինքնության խնդիրն ավելի լուրջ է դառնում: Ինչպես նշել է Ալի Ասադը, «դժվար է պահպանել ազգային ինքնությունը և փոխանցել սերունդներին այնպիսի հասարակությունում, որտեղ այդ ազգը «ճնշող» փոքրամասնությունն է կազմում»⁶: Այսպիսի միջավայրում էլ հենց առաջ է քաշվում ինքնության խնդիրը: Հայտնի է, որ ժամանակակից հասարակություններում անհատի էթնիկական ինքնությունը որոշվում է հիմնականում, մի կողմից՝ անհատի կողմից հարազատ համարվող լեզվով, ավելի ճիշտ՝ այդ լեզվի հետևում կանգնած մշակույթով, մյուս կողմից՝ այդ անհատի ինքնագիտակցությամբ, թե ինքն իրեն ո՞ր էթնիկական խմբի ներկայացուցիչ է համարում, բնականաբար կարևոր է նաև, թե տվյալ միջավայրում այդ անհատին ի՞նչ էթնիկական խմբի ներկայացուցիչ են համարում: Սոցիալական միջավայրը, ի դեմս տարատեսակ խմբերի, մեծ դեր ունի անհատական ինքնության ձևավորման հարցում: Ինքնության անհատական ձգտումները ձևավորվում են անմիջապես այն գիտելիքի ազդեցությամբ, որին կարևորություն է տալիս սոցիալական միջավայրը ⁷ : Այս պարագայում կարևորությունը տրվում է անզլերենին, ինչի հետևանքով էլ ստացվում է արաբական պետություն անզլերենի լայն տարածմամբ, որի հետևանքով առաջանում է ինքնության լուրջ խնդիր:

ԱՄԷ-ում արաբերենի ճգնաժամում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական գործոնները՝

⁶إشكالية اللغة العربية وقضايا التعريب في جامعة الكويت" أ. د. علي أسعد وطفة

⁷“Вопросы социальной теории”, И.С. Бакаланов, Т.В. Душина, О.А. Микеева, “Человек этнический: проблема этнической идентичности”, М., Том IV

1. Պատմական ժողովրդավարական (դեմոգրաֆիական) անցումը

Բազմաթիվ էթնիկ խմբերի առկայությունը ԱՄԷ-ին տալիս է յուրահատուկ բազմալեզու կարգավիճակ: ԱՄԷ-ում ժողովրդավարական անցումը սկսեց այն ժամանակ, երբ իշխանության եկավ ոչ արաբ տարրը: Դեռևս 16-րդ դարում, երբ եվրոպացիները մուտք գործեցին և հաստատվեցին Օոմի տարածաշրջանում, պորտուգալերենը սկսել է իր ազդեցությունը թողել տեղի բարբառների վրա: Ավելի ուշ փուլում՝ մինչև ԱՄԷ-ի անկախացումը, բրիտանական ուժը և անգլերենը սկսեցին իրենց հերթին մեծ ազդեցություն թողնել ԱՄԷ-ի և Օոմի երկրների լեզվի և արաբական մշակույթի վրա: Եվ քանի որ բրիտանացիներն էին դրել տարածաշրջանում կառավարման հաստատությունների հիմքը, ուստի մեծամասամբ հենց իրենք էին ղեկավարում նավթային կազմակերպությունները, բոլոր միջոցներն ու ապրանքները անգլիական էին: Ինչի արդյունքում անգլերենը պորտուգալերենից հետո դարձավ հաջորդ օտար լեզուն⁸:

Պորտուգալերենից և անգլերենից հետո հերթը հասավ հնդկերենին, երբ առաջին անգամ բրիտանացիները մեծ թվով հնդիկների բերեցին տարածաշրջան ժամանակակից տարբեր հաստատություններ ղեկավարելու համար, իսկ ավելի ուշ՝ նավթի հայտնաբերումից հետո, հենց իրենք արաբները կազմակերպեցին հնդիկների աշխատանքային ներգաղթ, որին հաջորդեց անցյալ դարի 70-ական թվականներին աշխատանքային ներգաղթը ասիական այլ երկրներից: Այս ամենի արդյունքում ԱՄԷ-ի բնիկ քաղաքացիները դարձան փոքրամասնություն: 1968թ. վիճակագրական տվյալներով ԱՄԷ քաղաքացիները կազմում էին բնակչության 63%-ը, 1975թ. տվյալներով 36%-ը, իսկ արդեն 2007թ.

⁸ "أزمة اللغة العربية في الخليج" عبید الجلیل زید المرهون

Բրիտանական խորհրդի հայտարարած տվյալներով ԱՄԷ քաղաքացիները կազմում են բնակչության ընդամենը 20%-ը: Բնակչության մնացած մասը օտարերկրացիներ են, որոնցից 60%-ը հարավային և հարավ արևելյան Ասիայի երկրներից, մեծ քանակ են կազմում նաև արաբական այլ երկրներից ներգաղթածները, հատկապես Պաղեստինից, Եգիպտոսից, Հորդանանից Եմենից, Լիբանանից Իրաքից և այլն: Կան նաև եվրոպացիներ: Բնակչության այսպիսի բազմազանության պայմաններում մարդիկ խոսում են բազմաթիվ լեզուներով: ԱՄԷ-ի ամենատարածված լեզուներն են անգլերենը, արաբերենը, ուրդուն, հինդին և այլն⁹:

Զարգացման ավելի ցածր մակարդակ ունեցող Ասիական աշխատավորական զանգվածն իր հետ բերեց մշակութային և հասարակական սովորույթները՝ հարված հասցնելով տեղի մշակույթին, հասարակության կառուցվածքին և ինչու ոչ նաև լեզվին: Ժողովրդագրական այս փոփոխությունները ստիպեցին տեղի բնակչությանը, իհարկե ոչ իրենց կամքով, հեռանալ լեզվական իրենց գանձարանից և տեղը զիջել օտարալեզու տերմինների:

2. Գլոբալիզացիան և անգլերենի գերիշխող դերը կրթության ոլորտում

ԱՄԷ-ում անգլերենի լայն տարածումը և արաբերենի նկատմամբ դրա գերիշխող դիրքը հաճախ կապում են գլոբալիզացիայի հետ, ինչը լուրջ հարված է հասցնում ազգայինին, մայրենի լեզվին և մշակույթին¹⁰: Արաբերենը, որը համարվում է արաբական ինքնության խորհրդանիշերից մեկը, աստիճանաբար իր տեղը զիջում է անգլերենին: ԱՄԷ-ում պաշտոնական լեզուն արաբերենն է, սակայն բնակչության բազմազգ լինելու պատճառով,

⁹Constantine, Z., & Al Lawati, A. (February 21, 2007). Mother tongue loses in the race of languages. Gulfnews.com. Retrieved October 28, 2007

¹⁰Maduagwin, M. O. (1999). Globalization and its challenges to national cultures

անգլերենն է կատարում հաղորդակցության հիմնական դերը: Դրա հետ մեկտեղ անգլերենը համարվում է նաև աշխատանքի և մասնագիտության լեզու, քանի որ ԱՄԷ-ում մասնագիտական հաջողության անհնար է հասնել՝ առանց անգլերենի իմացության: Անգլերենը գլոբալ լեզու է մի շարք ոլորտներում, ինչպիսիք են տնտեսությունը, առևտուրը, տեղեկատվական տեխնոլոգիաները և այլն:

ԱՄԷ-ի հանրակրթական դպրոցներում նույնպես մեծ ուշադրություն է դարձվում անգլերենի ուսուցմանը: ԱՄԷ-ի հանրակրթական ծրագրերում մի շարք առարկաներ, ինչպիսիք են մաթեմատիկան, կենսաբանությունը քիմիան և այլն, ուսուցանվում են անգլերենով, ինչն էլ իր հերթին նպաստում է մայրենի լեզվով գիտական տերմիններին չտիրապետելուն: Նախադպրոցական տարիքից սկսած մինչև համալսարանական կրթություն ԱՄԷ քաղաքացիները գտնվում են անգլերենի ազդեցության տակ:

Տեղացիների մեծ մասը նախընտրում է իր երեխաներին տալ անգլիական կրթություն, քանի որ վստահ են, որ անգլերենին լավ տիրապետելով, նրանք մասնագիտական հաջողության կհասնեն և հեշտությամբ կհնտեգրվեն ԱՄԷ-ի հասարակությանը¹¹ և այդպես կապահովեն իրենց երեխաների բարեկեցիկ ապագան: Ուստի լեզվի ճգնաժամի մեջ իրենց մեղքի բաժինն ունեն նաև ծնողները, ովքեր անտեսում են և ոչ այդքան կարևոր են համարում մայրենի լեզվի փոխանցումը իրենց երեխաներին և նախապատվությունը տալիս են անգլերենի ուսուցանմանը¹²:

Անգլերենի հասարակական և տնտեսական կարգավիճակը ավելի բարելավելու և պահանջարկը բավարարելու համար վերջին տասնամյակներում մի շարք անգլիական մասնավոր դպրոցներ են բացվել, որոնցում արաբերենի ուսուցումը շատ ցածր մակարդակի

¹¹Troudi, S. (2007). "The effects of English as a medium of instruction"

¹²Badry, F. (2007). "Global English and the construction of local identities"

վրա է գտնվում: Մասնավոր դպրոցների աշակերտները նախընտրում են անգլերենը արաբերենից, քանի որ վերջինս դժվար է սովորել:

Մի շարք գործոնների ազդեցության տակ երիտասարդ ուսանողները տարբեր դիրքորոշումներ են ունենում իրենց մայրենի լեզվի նկատմամբ: Այդ գործոններից ամենաազդեցիկը շրջակա միջավայրի ազդեցությունն է: Երկլեզու հասարակություններում երկրորդ լեզուն գերիշխող է դառնում մայրենի լեզվի նկատմամբ այն դեպքում, երբ ծնողները, դպրոցը և շրջապատը ցածրացնում է մայրենի լեզվի նշանակությունը, ուստի աշակերտներն ու ուսանողները լեզվական նախընտրությունը տալիս են այն լեզվին, որը մեծ հեղինակություն է վայելում իրենց շրջակա միջավայրում: Այդ կերպ նրանք դառնում են երկրորդ լեզվի և դրա մշակույթի կրողներ¹³:

Այսպիսի պայմաններում, երբ իրենց մայրենի լեզուն անտեսվում է հասարակության կողմից, բնական է, որ ուսանողները կորցնում են իրենց հետաքրքրությունը մայրենի լեզուն սովորելու և դրանով խոսելու նկատմամբ¹⁴: Մայրենի լեզվի սահմանափակ կիրառությունը դպրոցում, տանը և հասարակության մեջ հանգեցնում է երկրորդ լեզվի դերի բարձրացմանը: Իսկ ուսանողներին մայրենի լեզուն սովորելու համար անհրաժեշտ է մոտիվացնել և քաջալերել նրանց և՛ դպրոցներում, և՛ ընտանիքում, և՛ հասարակության մեջ¹⁵:

Լեզվի ճգնաժամի անմիջական կրողներն են երեխաները, ընդ որում որքան վաղ է սկսվում երկրորդ լեզվի ծանոթացումը և ուսուցանումը, այնքան ավելի խորն է լինում մայրենի լեզվի ճգնաժամը հետագայում: ԱՄԷ-ում անգլերենի համատարած

¹³Constantine, Z., & Al Lawati, A. (February 21, 2007). "Mother tongue loses in the race of language"

¹⁴Fishman, J. (1996). "What do you lose when you lose your language"

¹⁵Kayser, H. (2000). "Language loss or learning to speak English at any cost"

կիրառումը և պետական մակարդակով խնդրին լուծում չտալը հաջորդ սերնդների համար կարող է ապահովել լեզվի լիակատար ճգնաժամ:

ԱՄԷ-ում 340 ուսանողի շրջանում հարցում է անցկացվել, թե ինչ լեզվով են ուսանողները նախընտրում համալսարանական մասնագիտական կրթություն ստանալ: Հարցման մասնակիցների 50%-ը նախընտրել է անգլերենով ստանալ մասնագիտական կրթություն, 22%-ը՝ արաբերենով, իսկ 28%-ը նշել են ն՝ անգլերենը, և՛ արաբերենը¹⁶:

ԱՄԷ Բարձրագույն կրթության նախկին նախարար Շեյխ Նահյան քն Մուբարակ Ալ Նահյանը, որը ղեկավարում էր նաև երեք պետական համալսարան մինչև 2013թ., մշտապես շեշտել է անգլերենի ադմինիստրատիվ դերը կրթության կազմակերպման գործում: Անգլերենը դարձնելով համալսարանական կրթության հիմնական լեզու՝ Շեյխ Նահյանը նպատակ ուներ ԱՄԷ երիտասարդներին մրցունակ դարձնել միջազգային հարթակներում: ԱՄԷ համալսարաններում կրթությունը անգլերենով է կազմակերպվում հատկապես բիզնեսի, ճարտարագիտության, գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում:

Այսպիսով, կրթական ոլորտում անգլերենին տալով գերիշխող դիրք, առանց հավասար ուշադրություն դարձնելու ԺՄԱ-ի վրա՝ Բարձրագույն կրթության նախարարությունը ավելի է խորացրել արաբերենի ճգնաժամը:

3. Երկլեզվությունը և բազմալեզվությունը՝ անգլերենի գերիշխող դիրքի պայմաններում

Հասարական ակտիվ տեղաշարժերի արդյունքում երկլեզվությունը և բազմալեզվությունը, վերջին տասնամյակներում հատկապես, բնորոշ է աշխարհի տարբեր

¹⁶Charise, A. (2007). More English, less Islam? An overview of English language functions in the Arabian/Persian Gulf. Retrieved June 19, 2008

երկրներին՝ տնտեսական և հասարակական պատճառներով, քանի որ տարբեր մշակույթներ կրող բազմաթիվ մարդիկ միասին ապրում են նույն միջավայրում: Այդպիսով բազմաթիվ երեխաներ մեծանում են երկու և ավելի լեզուների միջավայրում: Երկլեզվությունը կամ բազմալեզվությունը մեծ տարածում ունի հասարակության մեջ: Լեզվաբան Ռիչարդելիի ձևակերպմամբ՝ «Երկլեզու կամ բազմալեզու են համարվում այն մարդիկ, ովքեր իրենց առօրյա կյանքում հավասարապես կամ գրեթե հավասարապես կիրառում են երկու և ավելի լեզուներ»¹⁷: Մեկից ավելի լեզուներին տիրապետող մարդիկ հաճախ իրենց խոսքում օգտագործում են բառեր և տերմիններ երկու լեզուներով էլ, և նրանց խոսքը դառնում է տարբեր լեզուների խառնուրդ: Սակայն երկլեզու է համարվում այն անձը, ով հավասարապես կամ գրեթե հավասարապես է տիրապետում երկու լեզուներին էլ¹⁸:

Յուրաքանչյուր հասարակությունում, որտեղ առկա է երկլեզվություն կամ երկբարբառություն, լեզուներից մեկին տրվում է գերիշխող դիրք՝ ըստ վերջինիս համընդհանուր հաղորդակցության գործառնության: Երկբարբառության դեպքում ուսումնասիրվող երկրում բանավոր խոսակցական բարբառն է գերիշխում, իսկ երկլեզվության դեպքում այստեղ գերիշխում է անգլերենը:

Ինչպես արդեն նշվել է, վերջին տասնամյակներում ԱՄԷ-ում ստեղծվել է երկլեզվային իրադրություն (Bilinguisme)¹⁹, ինչը աստիճանաբար խորանում է և հանգեցնում է անգլերենի համատարած կիրառմանը՝ մասնավորապես երիտասարդների շրջանում, որոնք աստիճանաբար կորցնում են արաբերեն

¹⁷Ricciardelli, L. A. (1992). Bilingualism and cognitive development in relation to threshold theor

¹⁸Romaine, S. (2000). Language in society. An introduction to sociolinguistics

¹⁹Cummins, J. (1984). Bilingualism and special education

մտածելու ունակությունը: Հարկ է նշել, որ երկլեզվության այս իրադրությունը տիրում է ԱՄԷ-ի հաղորդակցության գրեթե բոլոր ոլորտներում: Անգլերենի համատարած կիրառումը մոտ ապագայում կարող է դուրս մղել արաբերենը մի շարք ոլորտներից, իհարկե, եթե դրա դեմ պայքարի պետական քաղաքականություն չիրականացվի:

ԱՄԷ-ի բազմամշակութային և բազմալեզու իրադրության պայմաններում անգլերենն է կատարում հաղորդակցության համընդհանուր կիրառվող լեզվի գործառույթը տարբեր էթնիկ խմբերի միջև: Տնեսության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպը էլ ավելի է ամրապնդում անգլերենի այդ կարգավիճակը: Անգլերենը մեծ տարածում ունի նաև մեդիայում՝ թերթեր, հեռուստատեսություն, ռադիո, սոցալական կայքեր և այլն:

Հարկ է նշել նաև, որ ԱՄԷ-ի աշխատաշուկան աշխատողներից պահանջում է անգլերենի տիրապետում, առանց անգլերենի իմացության որևէ մեկը չի կարող մտածել աշխատաշուկայում աշխատանք գտնելու մասին: Աշխատանք փնտրողը ստիպված է սովորել անգլերեն որպես հիմնական պայման, այս պահանջը պարտադիր է ինչպես մասնավոր, այնպես էլ պետական կառույցներում, ինչն էլ իր հերթին է հանգեցնում արաբերենի դիրքի անկմանը, քանի որ աշխատանքի ընդունման ժամանակ չի պահանջվում արաբերենի տիրապետում, ուստի ուսանողները մեծ ուշադրություն են դարձնում անգլերենի իմացությանը, որպեսզի աշխատաշուկայում գտնեն իրենց տեղը և անտեսում են արաբերենը:

Հատկանշական է, որ անգլերենը լայն տարածում ունի նաև մի շարք այլ երկրներում՝ եվրոպական երկրներում, Չինաստանում, Մինգապուրում, Հարավային Կորեայում, սակայն բոլոր այս երկրներում այն մնացել է միայն միջազգային հաղորդակցության մակարդակում: Չնայած անգլերենի համատարած կիրառությանը,

այդ երկրները կարողացել են պահպանել իրենց ազգային պաշտոնական լեզուն:

4. Օտարերկրյա տնային աշխատողների և դայակների արագ տարածումը

ԱՄԷ-ում արաբերենի ճգնաժամում առկա է մի առանձնահատուկ գործոն ևս, այն է՝ օտարերկրյա տնային աշխատողների և դայակների լայն տարածումը տեղի բնակիչների տներում: Այն բանից հետո, երբ տնտեսական զարգացման պատճառով տեղացիները սկսեցին տան աշխատողներ և երեխաների դայակներ վարձել ասիական երկրներից, (սկզբնական շրջանում նրանք Հնդկաստանից և Շրի Լանկայից էին, այնուհետև Ֆիլիպինից, Ինդոնեզիայից, քիչ տոկոսն էլ Եթովպիայից), աստիճանաբար այս տարրը դարձավ տեղի բնիկ արաբների երեխաների դաստիարակող և խնամող տարրը, որն ամենօրյա շփում է ունենում երեխաների հետ, երբեմն իրենց ծնողներից ավելի շատ ժամանակ է անցկացնում երեխաների հետ, ուստի երեխաները լսում են աշխատողների աղավաղված անզլերենը կամ հենց նրանց մայրենի լեզուն: Հետևաբար նախադպրոցական շրջանում երեխաների արաբերենի ուսուցումը շատ թույլ է, այդ տարիքում երեխաների զբաղմունքը ժամանցն է միայն, մեծանում են առանց արաբերենի նորմալ տիրապետման, ժամանակակից սերունդի մոտ նախադպրոցական տարիքում արաբական մշակույթի նկատմամբ պատկերացումները թերի են: Այս խնդրում իրենց մեղքի բաժինն ունեն նաև պետական հաստատությունները, հավանաբար անհրաժեշտ է երեխաներին դպրոց ընդունել որոշակի քննություն անցնելուց հետո միայն, որպեսզի ծնողները պարտավորվեն և իրենց երեխաներին արաբերենի տարրական գիտելիքներ փոխանցեն: Նախադպրոցական տարիքում տարածաշրջանի երեխաների մեծ մասը թվերն ու գույները սովորում են նախ անզլերենով, ապա արաբական դպրոց

հաճախելուց հետո միայն՝ նաև արաբերենով (եթե իհարկե ծնողներն ընտրում են արաբական դպրոց):

Կրթության ոլորտի հետազոտողները նշում են, որ ԱՄԷ-ի երեխաները իրենց ընտանիքներում բախվում են լուրջ վտանգի հետ, քանի որ օտարերկրացի իրենց դայակները լուրջ և վտանգավոր ազդեցություն են թողնում երեխաների լեզվի ձևավորման վրա, երեխաները ստիպված են լինում սովորել իրենց առաջին բառերն ու արտասանությունը օտարերկրացի դայակներից, որոնք մեծամասամբ հնդիկներ, շրիլանկացիներ, ֆիլիպինցիներ և ինդոնեզիացիներ են: Այս ամենին ավելանում է արաբերենով գրական հրատարակությունների սակավությունը և նավթի հայտնաբերումից հետո տարածաշրջանում իշխող սպառողական մշակույթը:

5. Արաբերենի դերի նվազումը և պետական քաղաքականությունը

ԱՄԷ-ում քիչ տեղ է հատկացվում արաբերենի ուսուցմանը: Վերջին շրջանում բավականին քիչ թվով հրատարակումներ են լինում արաբերենով: Հատկապես նավթի հայտնագործումից հետո եկող սերունդը կարծես թե քիչ է հետաքրքրված արաբական մշակույթով կամ արաբական գրականությամբ²⁰:

Ուշագրավ է, որ ԱՄԷ-ի աշխատանքի նախարարությունը վեջերս հայտարարություն էր տարածել, ըստ որի ԱՄԷ-ում աշխատանքի անցնելու հիմնական նախապայմանը անգլերենի իմացությունն է: Նման հայտարարությամբ ԱՄԷ-ն պետական մակարդակով բարձրացնում է անգլերենի նշանակությունը հասարակության մեջ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս,

²⁰ "أزمة اللغة العربية في الخليج" عبد الجليل زيد المرهون

որ ԱՄԷ-ի երիտասարդ սերունդը ընդունում է, որ ԺՄԱ-ի իրենց իմացությունը շատ թույլ է²¹:

Կարելի է պնդել, որ ԱՄԷ-ում արաբերենի և արաբական մշակույթի ճգնաժամի մեջ իրենց մեղքի բաժինն ունեն նաև պետական կառույցները, որոնք բավարար միջոցառումներ չեն ձեռնարկում ամրապնդելու լեզուն և արաբական գրականությունը:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ, փաստորեն, նավթի հայտնաբերումը տարածաշրջանում բերեց տնտեսական զարգացման, բայց նաև լեզվական ու մշակութային անկման՝ հանգեցնելով ինքնության խնդիրների առաջացմանը:

ԱՄԷ-ում կրթական համակարգը ենթարկվում է լեզվական և կրթական հակասական ազդեցությունների, որը հանգեցնում է արաբերենի կարգավիճակի և դիրքի անկմանը: Դպրոցականները դասավանդման ընթացքում լսում են եգիպտացու, սիրիացու, հորդանանցու թունիսցու բարբառները, քանի որ յուրաքանչյուր ուսուցիչ դիմում է աշակերտներին իր մայրենի բարբառով, ուստի բնական է, որ ստեղծվում է բազմաբարբառ մի միջավայր, ինչը մեծապես ազդում էրեխաների լեզվի ձևավորման վրա: Այսպես, արաբ երեխան կարծում է, թե արաբերենը բազմազան է, բազմալեզու և բարդ, ուստի նախապատվությունը տալիս է պարզ և հասարակ անգլերենի կիրառությանը:

Նույն իրավիճակն է տիրում նաև համալսարաններում, որտեղ ուսանողները ստիպված են լինում լսել արաբական բազմաթիվ բարբառներ իրենց դասախոսներից, որոնք եկել են արաբական աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաև անգլերենի տարբեր բարբառներով խոսող ուսանողների:

ԱՄԷ-ում արաբերենը ենթարկվում է մշակութային ճնշման, որն աստիճանաբար վերացնում է արաբերենը նույնիսկ

²¹F. Badry and John Willoughby (2016) "Globalization and institutional viability"

մշակութային և գիտական կյանքից: Այս տեսանկյունից կարելի է նշել արաբերենի վիճակը ԱՄԷ պետական համալսարանում, որտեղ պայքար է տարվում արաբերենի դեմ: Համալսարանի գրեթե բոլոր ֆակուլտետներում դասավանդումն իրականացվում է անգլերենով, և այդ ֆակուլտետների շարքում են նույնիսկ մանկավարժության և գրականության ֆակուլտետները, իսկ այս ֆակուլտետները ամենակարևորն են հետազայում նոր սերունդ կրթելու համար: Այստեղ ուշադրություն է գրավում նաև այն հանգամանքը, որ այս ֆակուլտետների դեկանների և վարչական անձնակազմի մեծ մասը ամերիկացի են ազգությամբ: Նույնիսկ ԱՄԷ կրթության և գիտության նախարարությունից հրաման է արձակվել համալսարաններում արաբախոս դասախոսներին անգլախոս դասախոսներով փոխարինելու վերաբերյալ, որպեսզի ուսանողները կատարելապես տիրապետեն անգլերենին ²² : Ամերիկյան դպրոցում սովորելը դարձել է ցանկալի ապահովված ընտանիքների համար: Իսկ էլ ավելի ապահովված ընտանիքների համար պատվի խնդիր է դարձել երեխաներից գոնե մեկին Մեծ Բրիտանիայի կամ ԱՄՆ ամենահայտնի համալսարաններում սովորելն ապահովելը, այս պարագայում երեխայի կամքն ու մտավոր կարողությունները քիչ են հաշվի առնվում:

ԱՄԷ-ում արաբերենի ճգնաժամը կանխելու ջանքերը

Մայրենի լեզվի ճգնաժամը վերացնելու և լեզվի անկումը կանխելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ամրապնդել արաբերենի ուսուցումը դպրոցներում, այնուհետև նոր սկսել երկրորդ լեզվի ուսուցանումը: Հակառակ պարագայում երեխաները, դեռ չտիրապետելով իրենց մայրենի լեզվին, արագ

²² إشكالية اللغة العربية وقضايا التعريب في جامعة الكويت " أ. د. علي أسعد وطفة

ընկալում են իրենց մայրենիից ավելի դյուրին լեզուն և ժամանակի ընթացքում ավելի լավ են տիրապետում այդ երկրորդ լեզվին²³:

ԱՄԷ-ի ազգային թերթերը վերջին հրատարակություններում ընդգծում են ԱՄԷ-ի Ազգային դաշնային խորհրդի հողվածը, որում ասվում է, որ անհրաժեշտ է արաբերեն լեզվի պահպանության օրենք մշակել²⁴: Այս հայտարարությամբ պարզ է դառնում, որ ԱՄԷ-ում արաբերենի ճգնաժամը լուրջ մտահոգությունների տեղիք է սովել և այն պահպանելու համար օրենք ստեղծելու անհրաժեշտություն է առաջացել:

Արաբական աշխարհում արաբերենի խնդիրը արդիական է գրեթե բոլոր երկրներում, քանի որ արաբ երիտասարդները դժվարանում են սովորել ԺՄԱ-ն: Արաբերենը պահպանելու համար յուրաքանչյուր տարի Բեյրութում, Կահիրեում, Դուբայում և Քաթարում անցկացվում են ակադեմիական և կրթական տարբեր կազմակերպությունների հանդիպումներ:

The National-ը վերջերս մի հողված էր տպագրել՝ «Աբու Դաբիի Ծնողները, սովորեցրեք մեր երեխաներին արաբերենով» վերնագրով: Աբու Դաբիից 50 000 ծնող է մասնակցել հարցմանը, որոնք կոչ են արել իրենց երեխաներին սովորեցնել արաբերենով, անգլերենի փոխարեն ²⁵ : Սակայն Աբու Դաբիի կրթության խորհրդի հետազոտությունների ղեկավար Դր. Մասուդ Բադրին ուսումնական հաստատություններում արաբերենի նկատմամբ անուշադրությունը արդարացնում է արաբերենով գիտական առարկաների նյութերի սակավությամբ:

²³Cummins, J. (2001). Linguistic interdependence and educational development of bilingual children

²⁴ Salam, S. A. (2004, May 9). Enhance Arabic language, stress scholars. Khaleej Times. Retrieved June 23, 2005, <http://www.khaleejtimes.com>

²⁵The National, "Abu Dhabi parents, teach our children in Arabic" October 14, 2012

ԱՄԷ-ի Ազգային դաշնային խորհրդի մի քանի անդամներ կոչ են արել պետական համալսարաններում կրթության լեզուն սահմանել արաբերենը: Իսկ Դուբայի կառավարության մշակութային խորհրդական Ջամալ բն Հուսիբերը մեկնարկել է թվիթերյան արշավ՝ կոչ անելով իշխանություններին արաբերենը օգտագործել որպես ուսուցանման հիմնական լեզու, այդ արշավը մեծ տարածում է ստացել ²⁶ : Շահագրգիռ կողմերի աճող ճնշումները ստիպեցին որոշում կայացնողներին կրթության ոլորտում վերափոխել անգլերենի գերիշխող դերը, քանի որ կրթական նախորդ քաղաքականությունը բացասական է անդրադարձել արաբերենի, ազգայինի և արաբական մշակույթի վրա:

2012-2013թթ. ԱՄԷ-ում կրթական բարեփոխումների փուլ սկսվեց: Բարձրագույն կրթության նոր նախարար նշանակվեց Շեյխ Համդան բն Մուբարաք Ալ Նահյանը (նա Բարձրագույն կրթության նախկին նախարարի եղբայրն է), վերջինս սկսեց հանրակրթական դպրոցներում և պետական համալսարաններում կրթական բարեփոխումներ իրականացնել: Այդ գործում առաջին քայլը եղավ արևմտյան կրթական համակարգի փոխարինումը ազգայինով: ԱՄԷ Ջայեդ համալսարանն իր հերթին մեկնարկել է «Արաբերեն լեզվի ինստիտուտ» ծրագիրը, որի նպատակն է կրթական ծրագրերի արաբականացումը:

Ինչ վերաբերում է նախահամալսարանական կրթությանը, ապա Աբու Դաբիի կրթական խորհուրդը արաբերեն լեզվի ուսուցիչներին վերապատրաստում անցնելու հնարավորություն է ընձեռել, իսկ Դուբայի կրթական խորհուրդը մեկնարկել է դպրոցների արաբերեն լեզվի ուսուցիչների սերտիֆիկացման ծրագիր: Այնուհանդերձ, արաբերեի պահպանման ԱՄԷ կառավարության վերոնշյալ ծրագրերը իրենց նախնական փուլում են:

26 The National, "Bilingual education crucial for the UAE 2013" March 6, 2013

КРИЗИС АРАБСКОГО ЯЗЫКА В ОБЪЕДИНЕННЫХ АРАБСКИХ ЭМИРАТАХ

Асмик Ерицян
hasmikyericyan@gmail.com

Ключевые слова: арабский язык, кризис арабского языка, лингвистика, социолингвистика, диглоссия, двуязычие, лингвистическое влияние, арабские диалекты, роль английского языка, глобализация, глобальный язык.

Цель статьи- изучить кризис арабского языка в ОАЭ и выяснить его основные факторы. Подводя итоги исследования, можно сделать вывод, что современный стандартный арабский, а также разговорный диалект в ОАЭ находятся в кризисной ситуации. Естественно, в последние годы было много жалоб на языковой кризис, кроме того, некоторые государственные программы внедряются для сохранения арабского языка, но существенных изменений пока нет. Если правительство не обратит серьезного внимания на эту ситуацию, будет сложно говорить об арабском языке как о разговорном языке для следующих поколений ОАЭ.

Для того чтобы сохранить арабский язык, необходимо изменить образовательные программы в школах и государственных университетах, поддержать сохранение языка правительством, изменить отношение общества к родному языку, поощрять родителей к обучению своих детей арабскому языку и арабской культуре.

CRISIS OF ARABIC LANGUAGE IN THE UNITED ARAB EMIRATES

Hasmik Yeritsyan
hasmikyericyan@gmail.com

Keywords: Arabic language, crisis of the Arabic, linguistics, sociolinguistic, diglossia, bilingualism, linguistic influence, the Arabic dialects, the role of English, globalization, global language.

The purpose of the article was to study Arabic language crisis in the UAE and to identify its main factors. Summarizing the research, it can be

concluded that Modern Standard Arabic (MSA), as well as colloquial spoken dialect in the UAE are in crisis. In fact, there have been many complaints about the language crisis in recent years, in addition, some state programs have been implemented to preserve the Arabic language, but we have not yet seen any significant changes. If the government does not pay serious attention to this situation, it will be difficult to speak about Arabic language as the spoken language of the UAE for the next generations of the UAE.

In order to preserve Arabic language it is necessary to modify the education programs in the schools and the state universities, to support the preservation of the language by the Government, to change the public attitude towards the mother tongue, to encourage parents to teach their children Arabic language and Arabian culture.